Հայոց լեզվի օլիմպիադայի հանրապետական փուլի

Պատասխաններ-12-րդ դասարան

1. Մի օր սատանան որոշեց ***ցուցադրել*** իր զենքերը՝ շարելով դրանք ապակե ցուցափեղկում, և բոլորի վրա ամրացնելով պիտակներ՝ նշեց՝ որի գինը որքան արժի: Հավաքածուն ներառում էր մարդուն բնորոշ բոլոր հոռի գծերը(զորօրինակ՝ չարություն, ընչաքաղցություն, բոջախոհություն), ինչը մտորելու առիթ տվեց ոմանց: Նրանցից շատերն այդ պահին վերհիշեցին իրենց՝ անցյալում գործած արարքները:

Վերջում՝ ցուցափեղկի՝ ոչնչով աչքի չընկնող անշուք ***բարձին***, ամրացված էր մի վահանակ՝ *հուսահատություն* վերտառությամբ. այն, հակառակ ***մյուսների***, շատ բարձր գին ուներ:

Հարցին՝ ինչու այն այդքան թանկ արժի, սատանան պատասխանեց.

- Հուսահատությունն իմ հզորագույն զենքն է, իմ զենքերի զենքը. երբ չկարողանամ իրագործել մտադրությունս, նա ինձ օգնության կհասնի: Մարդն իսկույն իմ ձեռքի խաղալիքը ***կդառնա***, եթե մի փոքր հուսահատություն կաթեցնեմ նրա ուղեղում:

Սատանայի խոսքերից բոլորը կարկամեցին: Սրահում տիրող ճնշող լռությունը, սակայն, ընդհատվեց ներկաներից ***մեկի***՝ լուսավոր հայացքով մի երիտասարդի խրոխտ ու վճռական ***ձայնով***.

- Մոլորակի սիրելի՛ բնակիչներ, խնդրում եմ, թույլ մի՛ տվեք՝ հուսալքությունը հաղթի ձեզ, որովհետև չարության որոմը բույն կդնի ձեր հոգիներում, ու սատանային էլ կհաջողվի ապականել մեր բարի ու գեղեցիկ աշխարհը:

2. դրանց-դրանք, մարդու-մարդուն, կաթացնեմ-կաթեցնեմ, մի՛ թույլ տվեք-թույլ մի՛ տվեք, ապականելու-ապականել,

3. **որի**- հարց. հատկացուցիչ., **որքան**- հարց. չափի պար., **ինչը**- հարաբեր. ենթակա, **ինչու**- հարց., պատճառի պար., **երբ**- հարաբեր., ժամանակի պար.

4. **ցուցադրել** – ուղիղ խնդիր, **բարձին**- բացահայտիչ, **մեկի**- հատկացուցիչ, **մյուսների**,- զիջման պարագա, **հարցին**- հանգման խնդիր, **կդառնա**- հանգույց, **ձայնով**- ներգործող խնդիր

5. **ազոխ**- չհասած խաղող՝ պտուղ, **ստամբակ**-1.ըմբոստ, անհնազանդ, ընդվզող, 2. անկարգ, սանձարձակ, ստահակ, **սնդուս**-ողորկ ու փայլուն գործվածք, մետաքս, **անթրոց**- թոնրի կրակը խառնելու երկար ձող՝ թիակ, **որոմ**-մոլախոտ, փխբ. չարիք

6. Նրա տարերքը **նկարելն** է: Օրվա մեջ նա ունի իր **զբոսնելու** ժամերը: Ուշադրություն մի՛ դարձրու նրա անմիտ **խոսելուն**: Գիշերները **չքնելուց** մարդը գլխապտույտ է ունենում:

7. **թագավորը մերկ է**- այսինչի արժանիքները կեղծ են, անիրական, իրականում դատարկություն է, **Դիոգինեսի տակառ**- մեկուսացած կյանք, **լեռը մուկ ծնեց**-բարձրագոչ, ամպագոռգոռ խոստումներից հետո մի չնչին բան արվեց,
Կայենի խարան- եղբայրասպանի՝ դավաճանի կնիք

8. <u>հեծ</u>+<u>ել(յալ)</u>+ա+<u>խումբ</u>, <u>խոտ</u>+<u>հար</u>+ <u>ք</u>, <u>հն(հին)</u> + <u>ամ</u>+ <u>ենի</u>, <u>բազմ(բազում)</u> +ա+ <u>հատ</u>+ <u>որ</u>

Գնահատման չափանիշներ- 12-րդ դասարան

Ամբողջ հարցաշարին տրվում է 50 միավոր, որից՝

1. Բնագրի ճիշտ կետադրության համար տրվում է 6 միավոր:
   Յուրաքանչյուր կետադրական ոչ ճիշտ նշանի համար հանվում է 1 միավոր:
2. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 5 միավոր:
3. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 5 միավոր:
   Եթե շարահյուսական պաշտոնը սխալ է նշված, միավոր չի տրվում:
4. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 7 միավոր:
5. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 5 միավոր:
6. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 4 միավոր:
   Եթե նախադասությունը կազմությամբ պարզ չէ, կամ շարահյուսական պաշտոնը սխալ է նշված, ապա միավոր չի տրվում:
7. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 4 միավոր:
8. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 4 միավոր:
   Եթե արմատը կամ ածանցը ճիշտ ընդգծված չէ, միավոր չի տրվում:
9. Շարադրության համար տրվում է 10 միավոր:

Բոլոր առաջադրանքների ուղղագրական յուրաքանչյուր սխալի համար հանվում է 1 միավոր, կետադրականի համար՝ 0,5 միավոր, քերականական, ոճական և տողադարձի սխալներից յուրաքանչյուրի համար՝ 0,25 միավոր:

Յուրաքանչյուր առաջադրանքի ավել գրած սխալ պատասխանի համար հանվում է 1-ական միավոր: